



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամյո հաղորդագրություն

20 փետրվարի, 2009

**Կնքվեց Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման
նախագծման պայմանագիր**

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի և գերմանական GITEC Consult GmbH և «Հայ ԳյուղՇինՆախագիծ» ՍՊԸ-ի համատեղ կոնսորցիումի միջև պայմանագիր կնքվեց, համաձայն որի կոնսորցիումը Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շրջանակներում պետք է խորհրդատվական ծառայություններ մատուցի Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծային աշխատանքների իրականացման ուղղությամբ: Պայմանագիրը ստորագրվեց 2009թ-ի փետրվարի 20-ին ՀՄՀ-Հայաստանի գրասենյակում՝ Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի և GITEC Consult-ի ներկայացուցիչ Վոլֆգանգ Յենդրիշևսկիի կողմից:

Պայմանագիրը ներառում է Արարատյան հարթավայրի բնապահպանական իրավիճակի, հիդրոլոգիայի, փակ և բաց դրենաժային համակարգերի և հորերի վերլուծություն, սոցիալական և առողջապահական իրավիճակի գնահատում, ինչպես նաև՝ հեղինակային վերահսկողություն:

Պայմանագրի արժեքն է 998,243 ԱՄՆ դոլար, տևողությունը՝ 31 ամիս, որից 17 ամիսը՝ նախագծման աշխատանքների համար, 14-ը՝ հեղինակային վերահսկողության:

Այս պայմանագրի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: